

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԻՐԵԱՍՅԱՆԸ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԸ

Ս. Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Սփյուռքահայ առաջադիմական գրականության զարգացումը արտացոլող երևույթ է Ա. Անդրեասյանի ստեղծագործությունը: Նա նկատելի դեր է խաղացել ամերիկահայ գրական կյանքի կազմակերպման գործում, որին ամնացորդ ներգրավվել է դեռևս 30-ական թվականներին: Այս գաղթօջախի գրական բարձր նկարագիրը կազմում են այնպիսի երևելի անուններ, ինչպիսին են՝ Համաստեղը, Վ. Հայկը, Ա. Հայկազը, Բ. Նուրիկյանը և ուրիշներ: Նորագույն սերնդից կարելի է առանձնացնել Հ. Կարապենցին, Ն. Ակիշյանին: Նրանց կողքին է ավագագույն սերնդի ներկայացուցիչը՝ Ա. Անդրեասյանը, գրական անվիճելի տաղանդով, ընդգծված քաղաքացիական կեցվածքով, որն այսօր էլ, կյանքի ութսուներորդ տարում, լի է ստեղծագործական ավյուրով, ապրում է գրական աշխույժ առօրյայով:

Ծնվել է 1909-ին Խարբերդի հեթաթախին Չմշկածագի Հազարի գյուղում և, բնականաբար, կրել իր ժողովրդին բաժին հասած ծանրագույն հարվածները: Փախչելով անագորույն սպանդից՝ փորձել է հանգրվանել մերթ Ալեքսանդրապոլի, մերթ Կ. Պոլսի, մերթ հունական Պատրաս, Կորֆու, Աթենք քաղաքների որբանոցներում: Հազիվ 16 տարեկան՝ նա բախտ ու աշխատանք է որոնում Ֆրանսիայում, երկաթի մշակման գործարանում, ուր հարազատանում է բանվորական աշխարհին, որի կենսական շահերն արտացոլում են գտնում արդեն Ամերիկայում գրած իր պատմվածքներում, որոնք 1938-ին ամփոփում է «Սպիտակ արդարություն» ժողովածուի մեջ:

Հյուրընկալ Ամերիկյան ռեալ հնարավորություն է տալիս Ա. Անդրեասյանին ապրելու գրական-մշակութային նախասիրությամբ: Քսան երկար ու ձիգ տարիներ, սկսած 1937-ից, խմբագրում է «Նոր օր» եռօրյան, «Պայքար» օրաթերթը, ինչպես նաև նույնանուն հանդեսը: Մի առանձին ջերմությամբ, խանդադատանքով էր նա արձագանքում Մայր Հայաստանի ազգային-մշակութային վերածննդին, սակայն միևնույն ժամանակ սրտի խոր ցավ ապրում ստալինյան հալածանքների, ժողովրդի լավագույն զավակների կորստյան համար: Հայրենասիրությունը ստուգվում է գործողություններում: Պատերազմի տարիներին մամուլում, իսկ այնուհետև առանձին գրքով («Կարմիր ասպատակի օրագրեն», 1947) Ա. Անդրեասյանը անդրադառնում էր ֆաշիզմի դեմ պայքարի գեղարվեստական դրվագներին, լինել դա, ասենք, հելլենական հին ավազից երկրում, թե նվիրված լինել Ուկրաինայում խորհրդային պարտիզանների հերոսագործություններին: Նա գերմանական զավթիչների դեմ ժողովուրդների մղած կենաց մահու կռիվը դիտում էր որպես մարդկության փրկության, հույսի առհավատչյա: Սփյուռքում պատմվածքների մի ժողովածու ևս հրատարակելուց հետո («Վերջին կայան»), ամերիկահայ արձակագիրն ու հրապարակախոսը վերջապես հանդիպում է խորհրդահայ ընթերցողին՝ պատմվածքների հատընտիրով, որի վերնագիրը այնքան հոգեհարազատ էր իրեն՝ «Սպիտակ արդարություն»: Քննադատական շունչն առկա է նաև երեվանյան մեկ այլ ժողովածուի մեջ՝ «Դառնության բաժակը» (1984):

Նշանակալի է Ա. Անդրեասյանի դերը սփյուռքի պատմվածքի ժանրի զարգացման գործում: Կյանքի ճշմարիտ, դառը պատկերների միջոցով գրողը ցույց է տալիս հայ խլկանների գոյավիճակը օտար հորիզոններում, նրանցում ուրվագծվում են ժողովրդի բեկորների ճակատագիրը, հաժմաները, կարոտը հայրենի եզերքի հանդեպ: Այս առումով հատկանշական են «Հայրենիքի ձայն» «Դառնության բաժակը», «Պաղտասար քեռին» պատմվածքները: Այս,

ինչպես նաև շատ ուրիշ պատմվածքներում գրական ներշնչանքի աղբյուրը հայրենիքն է, հերոսների խոլական ձգտումը, որը գալիս է հեղինակի սեեռուն մտահայեցությունից:

Իր գրական-հասարակական խոհերում նա արտահայտում է հետևյալ հետաքրքիր միտքը. «Կյանքի մանրագույն պատառն իսկ վերստեղծելու ջանքը՝ արվեստագետի միտքն ու ոգին միայն կրնա բխիլ ու կենսավորիլ: Որևէ քերթվածի, պատմվածքի կամ վեպի բովանդակությունը ջերմորեն բարախուն մարմին մը կրլլա կամ սառնորեն անկենդան դիակ մը. անոնց կառուցվածքն ու ճճը արտահայտիչ տարազ մը կը դառնա կամ գունաթափ կտորներով կարկտնված ցնցոտի՝ համաձայն հեղինակը ոգեշնչող ձգտումներու գործության ու տաղանդին»¹: Այդպիսին է Ա. Անդրեասյանի դրական-ստեղծագործական հավատամքը, պահանջ, որ գիտակցորեն առաջադրում է նաև իրեն: Զի կարելի ընթերցողին ապրեցնել սին հույսերով, պատրանքներով՝ դաժան է կյանքը, մեծ՝ տառապանքը: Եվ այն կրելն է հային հայ պահում: Քննադատելով ուժացման, ձուլման միտումը ամերիկյան հայ շրջանակներում, գրողը ավագ սերնդի մեջ է տեսնում ազգապահպան ուժը, դիմակալության միակ իրական պատենը:

Վերցնենք «Պաղտասար քեռին» պատմվածքը: Նոր աշխարհ գաղթած առաջին հայերից է նա: Սակայն նրա անցած ուղին մեզ ներկայանում է անդրադարձի ձևով: Խոր ծերության մեջ վախճանված Պաղտոյին ճանապարհում են գերեզմանատուն, որի ընթացքում էլ «բացվում է» կերպարը: Վեց տասնամյակից ավելի ապրելով օտար երկրի տակ՝ Պաղտոն չի հաշտվել ճակատադրի խաղերին, միշտ հավատացել է վերադարձի հույսին. «Է՛հ, ողորմած հոգին ազատվեցավ... մինակ թե՛ անբախտ եղավ, մեկ մուրազ ուներ, որ երթար հո՛ն թաղվեր, ան ալ անկատար մնաց...»²: Նրա մահը հույսերի փլուզումն է, իրողության սթափ գնահատությունը, այն, ինչ գրականությանը հայտնի է «նահանջի» մեկնությամբ: Առաջին հայացքից խորթ ու անբնական է թվում Ֆրեդնոյի գերեզմանատան անվանումը՝ Արարատ, որը սարուռն է առաջացնում հեգնախառն, խռովիչ հակասականությամբ, իր հավերժության ու մահվան փաստի բախումով: Մինչդեռ առաջին տարագիրները փայփայել են այն միամիտ հույսը, թե այստեղ պիտի հանգչեն իրենք այն քաղցր պատրանքով, թե՛ «Արարատ անունը նաև պապենական երկիրն ու ջերմությամբ պիտի օծեր զիրենք կլանող խորթ հողը»³:

Պատմությունն ու ճակատագիրը հրամցնում են գաղթականներին «դառնության բաժակը», որը դեռ երկար պիտի պահել ձեռքերում: Այս միտքն է տիրում Ա. Անդրեասյանի հանրահայտ «Դառնության բաժակը» ծավալուն պատմվածքում: Ութսունը բոլորող հերոսի կյանքն ամբողջությամբ եղել է մաքառում, որի մեջ ընթերցողը տեսնում է ժողովրդի պատմական ճակատագիրը, տաճնապանքն ու նորոգվող անհանգստությունները: Նազարեթն Դավիթի կյանքում չի ազատվում հոգեկան տառապանքից, հիշողությունից, որոնք գումարվում են տարիքաբեր հիվանդություններին և առավել ներգործուն են կյանքի մայրամուտին: Ցավի ու երջանկության, մահվան ու գոյաւենելու համառության կծիկն է քանդում հերոսը իր խորհրդածություններում, երևան հանում դժվարին, բայց այնքան քաջածանոթ կենսագրական էջերը: Նա հիշում է, թե ինչպես թուրքերը մորթեցին հորը, իսկ մայրը փրկեց որդիների կյանքը՝ վերջին պահին «անհնազանդ» նազարեթին նետելով մարած թոռի մեջ ու վրան քաշելով խսիրե համառ ծածկոցը, այնտեղ, ուր իր եղբայրներն էին: Հիշում էր նաև պայքարի, մաքառման դրվագները, երբ ինքը, կոռովի ֆիդայի, «երիտասարդ փաթեամ մարմինը նետեր էր թուրքերու ուսմբէրուն ու սվինին դեմ»⁴: Հիշում էր նաև խորին խորհուրդը, գեղեցիկը իր աարած օրե-

¹ Ա. Անդրեասյան, Դառնության բաժակը, Սրեն, 1964, էջ 288:

² Նույն տեղում, էջ 12:

³ Նույն տեղում, էջ 13:

⁴ Նույն տեղում, էջ 25:

րում, ինչպես, օրինակ, «իր ծաղկատի Աննային մազերուն մետաքսե խուր-
ճերը կը շոյեր կամ կը գգվեր նոր կթված կաթի պես փրփրող անոր
կուրծքը...»⁵։

Ծերութեան ժամանակ էլ, խաղաղ, բարգավաճող Ամերիկայում նազարե-
թի համար կռիվ է, թո՛ւ ու բո՛հ։ Մի կողմից՝ հիվանդության դեմ, հանուն ապ-
րելու, մյուս կողմից՝ ուժացման, ազգայինի ակամա նահանջի դեմ։ Բայց ար-
դեն երկու դեպքում էլ նա տանուլ է տալիս։ Հիվանդության դեմ կռիվը նա-
ղարեթը մղում է կատակով, կյանքի ու մահվան զգաստ գիտակցությամբ,
աստծո ու սատանայի հետ իր տված վեճով։ «Հապա չես հարցներ, ինչո՞ւ
կը վիճեիր, հա՛... ան եկեր էր ինձի կը փորձեր,—ուխտնիդ մոտցեր ես,
կը պոռար երեսիս, ալ ի՞նչ գամվեր-մնացեր ես ցավերուդ, ելիր երթանք...
Մի՛ վախնար, կը խնդար ջորիի ակռաները բացած. հայերը երկրին վրա
դժուբին այնքան վարժվեր են, որ իմ փուռիս բոցերը ձեզ չեն այրեր... Գի-
տե՛ս, Աննա, նզովյալը շատ համոզիչ լեզու ունեւո՞ւմ։ Ձեի մեջ խորանում է
ենթիմաստը, որը տարողունակ է՝ հայերը ժամանակին հեշտ չեն հանձնվում,
ներառյալ ապրած գեհնն ինքնին սարսափելի էր, իսկ պայթարի վերջնահաշ-
վում դրախտի հույս չպիտի ունենաս, եթե որոշել ես ապրել։ Այնուհանդերձ,
հերոսը մեռնում է նահանջի արձագանքն ունկերում։ Մահն արդեն իսկ նա-
հանջն է, որ եկել-չոքել է իր դռանը. աղջիկը ամուսնացել էր իռլանդացու
հետ, դառձել իլիի, դարձել «Մայ ուայլտ այրիշ րոզ» երգի ներշնչարան, իսկ
որ ավելի ահավոր էր, հեռացել էր ազգային բարքերից, նահապետական
պարկեշտությունից։ Երբ, դեռևս ուսանողուի, Շուշանը «արկածով» հղիա-
ցավ, հայրն էր, որ խոր ամոթ էր ապրում, մինչդեռ աղջիկը, կատարյալ ամե-
րիկուհի, գիտեր իր անելիքը։ «Անոր փոքր եղբայրը խմիչքի, բախտախաղի
և անառակ փեշերու աղտերեն շէր կրնար մաքրվիլ»⁷։ Ապրելու համար բո-
լոր «որդիները մխրճվում են ամերիկյան կյանքի ճահիճը, «մոռանում են» հո-
րը, ամենայն հավականը։ Այդ մոռացման մեջ է գործարար մարդու հաղթա-
նակը, ալսպիսին է նահանջի անջեղ ուղին։

Խորն ու ողբերգական են Ա. Անդրեասյանի եզրահանգումները՝ հայկա-
կան համայնքի հեռանկարը դանդաղ մահն է, ազգային տարրերի հետևողա-
կան կորստյան ճանապարհը։

Լալն ճանաչում գտած ամերիկահայ արձակագիրը բավական ուշ դիմեց
վեպի ժանրին։ Առաջին վեպը երբ լույս տեսավ, նա արդեն 65 տարեկան էր։
Այժմ նույնպես նրան զբաղեցնում են այդ ժանրի լայնածավալ հնարավորու-
թյունները։ «Դառնության բաժակ» ժողովածուի առաջարանում Ստ. Կուր-
տիկյանը տեղեկացնում է, որ Ա. Անդրեասյանը «...գրում է երեք հատորից
բաղկացած վեպ։ Այնտեղ իրենց գեղարվեստական մարմնավորումն են գրու-
նելու փոթորկալից հայ կյանքի վերջին մեկ դարը, ազգային զարթոնքը, ա-
զատագրական շարժումները... Վիպաշարն ավարտվելու է հայ ժողովրդի
խորհրդային վերածնունդով»⁸։ Բեյրութի «Շիրակ» ամսագիրը հաղորդում է,
որ ամերիկահայ գրողը, ավարտելով աշխատանքները համայնապատկեր-վե-
պի առաջին երկու գրքերի վրա («Դեպի մայրամուտ», «Գերեզման և հարու-
թյուն»), ցանկություն է հայտնում, «...որպեսզի ան կարենա փութով գլուխ
հանել իր այս գործը»⁹։ Երրորդ գիրքը հեղինակն անվանել է «Վերածնունդ և
վերադարձ»։ Ավելացնենք, որ վիպաշարի երկրորդ հատորը, որը լույս է տե-
սել անգլերեն 1985-ին և արժանացել «Հայկաշեն Ուղունյան» մրցանակին,
պատմում է կոտորածների և պայթարի մասին։ Մյուս հատորը 1988-ին նույն-
պես լույս է տեսել անգլերեն, եղբոր՝ Հայկի թարգմանությամբ։ Ըստ հեղի-

5 Նույն տեղում, էջ 24։

6 Նույն տեղում, էջ 33։

7 Նույն տեղում, էջ 43։

8 Նույն տեղում, էջ 7։

9 Շիրակ, Բեյրութ, 1988, թիվ 7, էջ 1։

նակի մտահղացման, եռերգությունն ունի նաև ընդհանրական վերնագիր՝ «Փուլզում և վերածնունդ»:

«Երկար գիշերին մեջեն» վեպը վայրկենական մտահղացման տակ չի ծնվել: Անդրանիկ Անդրեասյանը 50-ական թվականներին խորությամբ ուսումնասիրում էր ամերիկյան հասարակության հակադեմոկրատական ներհակ այն ժավալումները, որոնք պատմության մեջ հայտնի են հետագեմ սենատոր Ջ. Ռ. Մակարտու անունով, որը լուրջ փորձության ենթարկեց ԱՄՆ-ի ազատասիրության և դեմոկրատիայի ավանդույթները:

Ընդհանրապես, ամերիկյան գրական կյանքը, մասնավորաբար քննադատական ռեալիզմի առաջադիմական թևը, աշխույժով արձագանքեց 40—50-ական թվականների քաղաքական-հասարակական անցուղարձեփին: Միաժամանակ չի կարելի ոգևորվել մակարտյան շարժման դեմ ուղղված գրական օրինակներով և նրանց մեջ պարտադիր սոցիալիստական գաղափարներ տեսնել, ինչպես դա փորձում է անել Ա. Ս. Մուլյարչիկը¹⁰: Պետք է, հիրավի, ուրախ լինել, որ ռեալիստ, դեմոկրատ հայ գրողը մասնակից է դառնում համամերիկյան գրական պրոբլեմներին, շարժմանը, և բուն հարցադրման տեսակետից, նյութը բացելու վարպետությամբ բոլորովին չի զիջում անգլիագիր իր «մրցակիցներին»: Այս վեպի վրա նա իր աշխատանքները սկսել է ստեղծագործական որոշ «կուտակումից» հետո, 1962-ից: «Երկար գիշերին մեջեն» վեպը գրվել է բավական երկար միջոցում՝ շուրջ 12 տարի, որը հուշում է մանրակրկիտ, «սև» աշխատանքի մասին:

Անսովոր են վեպի թեմատիկան և միջավայրը. վիպագիրն անտեսել է հայեցի միջնորդը, հայ մարդուն, նախաձեռնել է ցույց տալ ամերիկյան բարքերի, նրա քաղաքական վայրենիքից հարաբերությունների նկարագիրը 50-ական թվականներին: Միտումը խորթ չէ ամերիկահայ գրողներին: Օրինակ, Համաստեղի «Չամչով կարկանդակ», «Անսովոր կինը» երկերը ընդունում են զուտ տեղային կյանքը՝ առանց հայկական «միջամտության»:

Անդրանիկ Անդրեասյանին հետաքրքրում են ամերիկյան կյանքն ու գործելակերպը, նրա հասարակական զարգացման դինամիկան, ահա թե ինչու հայ հերոսների նա չի ներառել վեպի ուղեծիր՝ ձգտելով որքան հնարավոր է համապարփակ տալ քաղաքական սուր հարցադրումների բնույթը: Ըստ գրողի մտավախության, հայերի կերպարները «կապահանջին» ազգային ողբերգության, նահանջի, հայկական տոհմիկ նկարագրի պահպանության գեղարվեստական լուսաբանումներ, ինչն արդեն կթուլացներ, կտարրալուծեր վեպի թեմատիկ ամբողջականության հեղինակային ըմբռնումը: Անմիջապես նկատենք, որ գրական այսօրինակ «կոսմոպոլիտիզմը» գուցե բացատրվի ինչ-ինչ սուբյեկտիվ կարգի գրգռատեսչաներով, սակայն ընդունելի չի կարող դիտվել սփյուռքի գրականության լինելության բուն տեսանկյունից: Չէ՞ որ նա համախմբում է ազգային հոգևոր ուժերը, վերաբերմունք դրսևորում ժամանակի ցանկալի և ոչ ցանկալի բոլոր միտումների նկատմամբ: Գրողը, անտարակույս, չի կարող իրեն պատասխանատու չզգալ իր հալածական, առայսօր թափառիկ ժողովրդին գրականության օգնությամբ կողմնորոշելու խնդրում:

Հարցն ինքնին երկսայր է, և ծայրահեղ մոտեցումները բացառում են ճշմարիտ գնահատականը: Փորձենք մյուս ծայրակետից մոտենալ. Ա. Անդրեասյանի վեպը թեմայի առումով հաղթահարում է սփյուռքահայ գրականության խրոնիկական միակողմանիությունը: Թերևս առաջին անգամ նա քննում է ասպնջական երկրի մեծ առօրյան ոչ-հայկական դիտակետից: Երևույթը ողջունում է Գ. Սևանը, որը մատնանշում է սփյուռքահայ գրականության

¹⁰ А. С. Мулярчук, Современный реалистический роман США, 1945—1980, М., 1988, с. 50. Ինքնիշխան ուժով խորհրդապիսի գրականագետը գրում է. «Փառասնական թթ. վերջին և 50-ական թթ. սոցիալիստական գաղափարների գրականության առաջատար թեման գարձավ բողոքն ընդդեմ անհատի քաղաքական իրավունքների մակարտիզմի ճնշման փորձերի» (նույն տեղում):

կտրվածությունը «մեծ աշխարհից», իրավացիորեն պատճառներից մեկը, բայց ոչ միակը համարելով այդ աշխարհի գրքային պատկերացումը¹¹։ Հի-րավի, միև գրողները ընդհանրապես խորանում են զուտ տեղային հարաբե-րությունների մեջ այնքան չափով, որքան թույլ են տալիս նրա հետ հայկա-կան շփումները։ Եվ որպես հետևանք՝ ֆրանսիականը, արաբականը, ամե-րիկյանը և մյուսները «համապատասխանահայ» դրականություններում մա-կերեսային, հպանցիկ ճանաչողության են արժանանում, այնքան թույլ, որ լիիրավ կարելի է ասել, թե չենք էլ նշմարում նրանց կյանքի «շնչառությունը»։ Այս կտրվածքով հարցին մոտենալիս՝ պիտի ընդունել, որ Ա. Անդրեսայանի «Երկրորդ գիշերին մեջեն» վեպը հայ գրական անդաստանում մեկ-երկու գրա-կան բառառություններից մեկն է։

Անտարակույս, նյութի ընտրությունը շատ բանով նախորոշել է և ժանրային լուրահատկությունը: Ըստ էության գործ ունենք քաղաքական վեպի հետ, ուր առաջնային է հրապարակախոսական շունչը: Միջավայրի ընտրությունը ես աղերսվում է գաղափարական խնդրին. հերոսները խոշոր գիտնականներ են՝ բանասեր-պատմաբաններ, բուհական մտավորականներ: Ժամանակը ստուգում է նրանց քաղաքացիական խիղճը, որոշակի գաղափարներին նվիրվածության ապուխճանը:

Դիսավոր հերոսը ծնյալ Պրուքսն է՝ համեմատական գրականագիտու-
թյան ականավոր մասնագետը, էվլերկրինի նշանավոր համալսարանի փոր-
ձառու դասախոսը։ Վեպի սկիզբը, կարծես, տազնապալի ոչինչ չի պարունա-
կում իր մեջ հերոսի համար, ընդհակառակը. հաշվի առնելով գիտական բարձր
էրուդիցիան, կադմակերպչական ուժը, սկզբունքայնությունն ու անաշուու-
թյունը, հիսունը մի փոքր անց այդ մարդուն համալսարանի ղեկավարություն-
նը վստահում է պատմություն և գրականության բաժանմունքի ուսուցչապե-
տությունը։ Շուրջ երեսուն տարի նա կապված է ուսանողության, դասախո-
սական աշխատանքի հետ։ Անակնկալ պայթած սեռական բուժմը, երիտասար-
դական որոշ ծայրահեղություններ նոր խնդիրներ են տալիս լուծելու, սակայն
նա խորապես հավատում է ուսանողական քաղաքական սյաքարի ուժին։
Պրուքսը հիշում է իր երիտասարդական շրջանը. «այն ատեն ընդունված ա-
ռաջնորդն էր ուսանողական շարժումներու մեջ։ Միուժյան թերթը անգամ
մը գտնակար տպեր էր՝ մեկ ձեռքին բռնած իտեալի ջուհը և մյուսին՝ բա-
նեզանդության մտրակը»¹²։ Հերոսի քնավորության համար, անզիջում ոգին
ուղեկցեց իրեն նաև հետագայում։ Պատահական չէր, որ սթպի հայացքը,
կամքը, քաղաքական արդար կողմնորոշումը բարեկամներից զատ՝ վաստա-
կել պիտի տալին նաև ոխերիմ թշնամիներ։ Սառը պատերազմի ջատագով-
ները, արդեն ձևավորվող մակարտիզմի գաղափարախոսները Պրուքսին հա-
մարում էին արտառոց համոզումների տեր անձնավորություն, որը «կը փորձե
քանդել ամերիկյան դրուժությունը կանգուն պահող ամեն տնտեսական օրենք,
ամեն նվիրական ավանդություն»¹³։ Բայց շատ շուտով ընդհանուր կարգի մե-
ղադրանքները ստանում են քաղաքական ստահող բնույթ։ Ֆեդերալ հետա-
քննչական հանձնախմբի կազմած հալածական սաղորդք-տեղեկագիրը պետք
է իրր ապացուցեր, թե «հակաամերիկյան գաղափարներու և դավերու լծված
շարք մը մարմիններու հետ բրոֆեսոր Պրուքսի գործակցելուն փաստերը ան-
հերքելի են»¹⁴։ Սենատի կազմած հանձնաժողովը խնամքոտ նախապատրաս-
տական աշխատանք է կատարում՝ անգամ Պրուքսի մտերիմներից Տեյլիտից
կորզելով սուտ վկայություն։ Ի դեպ շեշտենք, որ հեղինակին հիմնականում
նաշողվել է տալ հետադեմ ուժերի և նրանց դեմ պայքարի ծավալուն նկարա-
գիրը ամերիկյան կյանքի ընդհանուր խորքի վրա, բացահայտել դարակե-
սին երկրում տիրող խայտառակ բարքերի՝ կասկածների, հետապնդումների ու

¹¹ Քննդատական տարեգիրք—1985, Երևան, 1985, էջ 152:

¹² Անդրանիկ Անդրեասյան, Երկար գիշերին մեջին, Լոս Անջելես, 1974, էջ 32:

13 Նույն տեղում, էջ 12:

14 Նույն տեղում, էջ 134:

հաշվահարդարների տղջ մեխանիզմը, որոնք զանգվածային բնույթ էին սկսել կրել:

Վեպի գործողությունների ծավալման կիզակետը հանձնախմբի ատենապետի վարած նիստերն են համալսարանում, նիստեր, որոնք ավելի շուտ դատավարություն էին հիշեցնում: Հերոսի հետ միասին հեղինակը դատապարտում է անհատի իրավունքների, բանականության օրենսդրությամբ ապահովված ազատության, դեմոկրատիայի խեղման յուրաքանչյուր դրսևորում՝ լինի դա անցյալում, թե ներկայում, ևՍՀՄ-ում, ԱՄՆ-ում թե որևէ այլ մի երկրում: Ուշագրավ մի փաստ. անհունորեն սիրելով Հայաստանը վերածնող խորհրդային երկիրը, սթափ դատապարտելով «կարմիր վտանգի» սնանկ տեսությունները, որը, վերջին հաշվով, իբր կոչված էր կանխելու մակարտիզմը, Անդրանիկ Անդրեասյանը միաժամանակ զայրույթով էր խոսում ստալինյան սրյունոտ բռնապետության մասին՝ ոչ առանց հիմքի գուգահեռ անցկացնելով ԱՄՆ-ի սենատի հետաքննչական հանձնախմբի գործունեության և երեսնական թվականներին Վիշինսկու կազմակերպած ցուցադրական, բեմականացված դատավարությունների միջև: Այստեղ երևում է գրողի քաղաքացիական ուժը, երևելիք սեփական համոզումով, առանց խմբագրման ներկայացնելու ջիղը, երբ մի կողմ է դրվում դիվանագիտական մտավախությունը, թե ստալինիզմի սուր քննադատությունը¹⁵ կարող է խաթարել իր և մայր երկրի հարաբերությունները, թե բրեժնևյան դոկտրինայի համաձայն՝ իր՝ Ա. Անդրեասյանի անվան վրա կարող էր իջնել գրողական «մոռացության» և անհիշելիության ունակ վտանգը, ինչպես դա փորձեցին անել արտասահմանյան մի շարք հեղինակների (օրինակ, Ջ. Ստայնբեկ, Ա. Միլլեր) հետ, փորձ, որ պետք է ձախողում կրեր: Արդեն այն պարագան, որ Ա. Անդրեասյանի՝ լուս Անջելեսում տպված վեպը 1974 թ. ի վեր չեն համարձակվել ծրեանում ևս հրատարակել, ինքնին խոսում է այդ վտանգի ունակության, գործուն վարքագծի մասին: Մինչդեռ, վեպն անկասկած իր քաղաքական սուրսայր հարցադրումներով ամերիկյան կյանքի մեզ քիչ ծանոթ, սիրով լի, բայց խստաշունչ պատկերներով կհետաքրքրեր ոչ միայն խորհրդահայ, այլ նաև ռուս ընթերցողին: Նկատենք, որ ընթերցողին այսօր գրավում է ժամանակին հակախորհրդային հորջորջված Արթուր Կլոստերի «Կուրացուցիչ խավար» վեպը, որը Մոսկվայում լույս է տեսնում գրքի առաջին լոնդոնյան հրատարակությունից 49 տարի հետո միայն, ամբողջությամբ նվիրված է արյունալի դատավարությունների փաստին:

«Երկար գիշերին մեջեն» վեպի մեջ քննիչները էվերկրինի համալսարանում արդեն «ապացուցել էին» շուրջ մեկ տասնյակ գիտնականների, այդ թվում՝ վիպական հերոսներից Լրվինի, Կորտենի քաղաքական «հանցանքները», որոնք իբր 30-ական թվականներին իսպանական հանրապետության հրահրիչ կողմնակիցներն են եղել: Սակայն, անտարակույս, այս բոլորը, հեղինակի դիպուկ արտահայտությամբ, «պարզ բեմական հարդարանք»¹⁶ են, գլխավոր թիրախը Ճեյմզ Պրուքսն է, որը հրաժարվում է լուրուց, ամերիկյան սահմանադրության 65-րդ բարեփոխման հովանիի տակ՝ պատասպարվելուց: Պրուքսը ճակատամարտ է տալիս և շահում է: Նա այդ պայքարը մղում է ոչ թե սեփական անձի փրկության, այլ գաղափարների, սկզբունքների անաղարտության համար: Ցուցադրական հարցաքննության ժամանակ Պրուքսն ավելի շատ մարտնչող է, ընդվզող: Նույնիսկ նախապես զգուշացնում է ատենապետին ու նրա օգնականներին, թե չթերևս ձեր հանձնախմբը ավելի կարիք զգա ինքզինք պաշտպանելու»¹⁷:

Մեղադրանքների բազմապիսույթությունը, իհարկե, անակնկալ չէր Պրուքսի համար, որը գիշերային մենության տառապանքներում մարդկության պատ-

15 Նույն տեղում, էջ 208—213:

16 Նույն տեղում, էջ 271:

17 Նույն տեղում, էջ 283:

մուկությունից ոգեկոչում էր իրեն անհրաժեշտ արդարության մեծ նահատակների օրինակներ՝ Սոկրատես, Քրիստոս, դ'Արկ, Բրունո, Դրեյֆուս և ուրիշներ, որոնք օգնում են իրեն դիմակայել մուկ ուժերին: Պրուքսին փորձում են հանցավոր ճանաչել լուսավոր հայացքների համար, սակայն դրանով արդեն իսկ մատնում էին իրենց հետադիմական պատմաֆորմը: Մակարտիզմը ռասիստական շարժում էր, և բոլորովին պատահական չէր, որ Պրուքսին ամբաստանում էին գոլանամորթների, Մարտին Լութեր Քինգի պայքարը արդարացնելու համար: Հանձնախումբը արտահայտում էր սառը պատերազմի քաղաքականության շահերը, որոնց իրագործողները բացահայտ թշնամանքով էին ընդունում ամերիկյան և խորհրդային յուրաքանչյուր աննշան համագործակցություն: Պրուքսն իրատեսորեն բարձրացնում է ռազմականապես հզորացող երկու տերությունների դաշինքի խնդիրը. «Եթե բարեկամ դառնան՝ կրնան արդար, տեական խաղաղություն մը ստեղծել, և բոլոր ազգերը, նույնիսկ դուք և ես քիչ մը ավելի ուրախ կապրենք»¹⁸, Հակառակ դեպքում՝ «խեղճ մարդկությունն ալ թերևս գերեզման դնեն»¹⁹: Այս դեպքում արժանին պետք է հատուցել Ա. Անդրեասյանի քաղաքական կանխատեսության բնագծին, որը, անտարակույս, հատկանշվում է խաղաղության աննախապայման լիցքով: Ընդգծենք, որ այդ ըմբռնումը գործարար և տիրապետող դարձավ երկու երկրների միջև միայն ութսունական թվականների կեսից:

Ընդդեմ է, մեկ-երկու ուրիշ «երկրային հանցանքներում» ևս ատենապետը փորձեց տեսնել Պրուքսի «քայքայիչ» ձեռքը, սակայն դրանք հիմնադուրկ էին, և «ամբաստանյալի» համար դժվարություն չէր բացահայտել կեղծիքի արմատը: Վեպում քաղաքական զգաստությունը և հայացքների մարտնչող պրուքսյան ոգին անմիջապես ժառանգում է բանվորական միջավայրից սերված Ֆրենք Քելին՝ ուսանողական ցույցերի հանդուգն կազմակերպիչը, որն արդեն հասցրել է պայքարի դեմք, երիտասարդության ճանաչված առաջնորդ դառնալու: Նա պիտի անցնի բոլոր ճանապարհներով ու փորձությունների միջով. դժվարություններ, փակուղիներ կլինեն, սակայն հազիվ թե դրանց առաջ երկնչի Քելին՝ այդ համառ իռլանդացին: Չէ՞ որ նա Պրուքսի աշակերտն է՝ բառիս ամենալայն իմաստով:

Վեպի հրապարակախոսական-քաղաքական և գեղարվեստական տարրերի հարաբերակցությունը խորաշերտ է, և երևի դժվար է միանշանակ արտահայտվել առաջինի անվիճելի գերակայության պայմաններում երկրորդի կարելիությունների համեմատ դրսևորման մասին: Անդրանիկ Անդրեասյանը 60—70-ական թվականներին ամերիկյան գրական շարժման մեջ որսում է նրա մի էական հատկանիշը՝ դեպի ռեալիստական վեպը վերադարձի միտում, ընդ որում 70-ական թվականներին ուժեղանում է հասարակական-քաղաքական կյանքի համապարփակ պատկերման ձգտումը խորհրդային ընթերցողին ծանոթ Կ. Վոնեգուտի, Ջ. Բուդուինի և համեմատաբար երիտասարդ տարիքում վախճանված Ջ. Հարդնի ստեղծագործություններում, որից ռուսերեն մեզանում լույս են տեսել «Նիկելի լեռ» և «Աշնան լույս» վեպերը: Ի դեպ, հարկ կա խոսելու հրապարակախոսական-քաղաքական վեպի ժանրի այն տարբերակման մասին, որն առկա է ամերիկյան և խորհրդային ժամանակակից գրականություններում: Բանն այն է, որ խորհրդային վերջին շրջանի գործերում արտահայտվում է գրողի սուր հրապարակագրական ոգին, նրա ներքին ընդլզումը լծացման և ավելի վաղ տարիների հասարակական ինտրոսկոպիան, անտարբերության դեմ (Վ. Ռասպուտին, Վ. Աստաֆև, Վ. Բելով, Չ. Այթմատով, որոշ չափով նաև՝ Յու. Բոնդարև և ուրիշներ): Իսկ ահա ամերիկյան հրապարակախոսական վեպը հակվում է անցյալի կամ ներկայի քաղաքական-հասարակական, պատմական շրջադարձերի գեղարվեստական մեկնա-

¹⁸ Նույն տեղում, էջ 326:

¹⁹ Նույն տեղում:

բանումներին, բարքերի անհամեմատ ամբողջական, համալիր քննության, թեև դա իրեն ոչ միշտ է հաջողվում: Կարելիվոյն չափ մատնացույց է անում սոցիալ-քաղաքական շարիքն ու նրա հասարակական վտանգավորության աստիճանը, իսկ գլխավոր հերոսի տիպականացման շնորհիվ հասնում առաջադիմական ուժերի մարմնավորման ցայտուն արտահայտության՝ հենց ամերիկյան վեպին ներկայացվող պահանջներին համաձայն: Այս էական գնահատությունը սփյուռքի գրականության ընդհանուր համակարգում ամերիկահայ ավագագույն գրողի ստեղծագործությունը որակական ձեռքբերում, նվաճում դիտելու ռեսու հիմքն է:

Անդրանիկ Անդրեասյանն իր ծավալուն վեպում փորձում է ներկայացնել Պրուքսի ընտանեկան շրջանակը ևս, որպեսզի հերոսի կերպարը հավակնի գեղարվեստական նկարագրի ամբողջության: Ընտանիքում իշխում է հովվերգական երջանկությունը, որը հակառակ ծայրակետից, ըստ հեղինակի, պիտի ուժեղացնի Պրուքսի ապրած դրաման: Սակայն հայ գրողը այս հարաբերությունների պատկերման մեջ, ձգտելով վիպական հյուսվածքում գեղարվեստական տարրի կայունացման, տեղի է տալիս սխեմատիզմի, գրական «կանոնականության», կերպարների և գործողությունների պատրաստի ուրվագծերի մոտքին: Որքան էլ զարմանալի է, բայց ստացվում է այնպես, որ կինը՝ Հելլենը, երեխաները անհատական, կենցաղային կամ «իմաստային» որևէ նոր բեռ չեն հավելում հերոսի ուսերին: Ընտանեկան մթնոլորտը վեպում դարձել է մղձավանջային, սակայն ամեն պարագայում առաջնային դիտվող միջավայրի միայն լրացուցիչ լծակը և գործողությունների ծավալմանը գեղարվեստական-գաղափարական տեսակետից առանձնապես չի նպաստում: Այսպես, ավագ որդին՝ Հերբերտը, որոշակի հաջողություններ ունի փաստաբանական և առևտրական պրակտիկայում, դուստրը՝ էմման, ուսանողուհի է և պատրաստվում է իր ընտանիքը կազմել, իսկ կրտսեր որդին՝ քսանամյա Բիլլըրտը, համալսարանական նստարանից ձգտում է գիտության բարձունքները, — սակայն նրանք բոլորը իրենց մոր հետ միասին զրկված են վիպական հերոսի ինքնուրույն և լիարյուն կյանքից, երևում են սոսկ հոր հետ կապերում: Եվ եթե նրանց հետ մեկուսի ինչ-որ բան պատահում է, որին մենք տեղեկանում ենք, ապա՝ հոր «պատճառով»: Օրինակ, դատավարության եռուն շրջանում աղջկա առևանգման ե բռնաբարման փորձը, ինչպես նաև վարձու ստահակների կողմից Բիլլըրտին ծնծելը նպատակ ունենի վախեցնելու և լռեցնելու հայր Պրուքսին, դարձնելու նրան իրենց քաղաքական «հաղթարշավի» լավագույն իլյուստրացիան: Միայն այս իրադարձություններն են, որոնք հնարավորություն են ընձեռում փոքրիշատե շփվելու որդիների հետ: Այդ շփումը, սակայն, բռնազբոսիկ է, երևույթի սխեմատիկ, պարզունակացված յուրացման հետևանք:

Վեպի գլխավոր հերոսը առաջատար գրականագետներից է, և, բնականաբար, աչնտեղ նշանակալից տեղ են գրավում գրական-գեղարվեստական հարցերը՝ ամենատարբեր առիթներով հայտնվելով գաղափարական հանգուցակետերում: Դրանք հեղինակի ընտրությամբ Պրուքսի դասախոսություններից կամ մենախոսություններից քաղված հատվածներ են, որոնք ընդհանրության մեջ արտահայտում են հենց Անդրանիկ Անդրեասյանի գրական հայացքները:

Գրական ստեղծագործության առաջնային պայմանը Պրուքսը համարում է ճշմարտությունը և «լման ճշմարտության»²⁰ չափանիշը՝ հավաստելով իր խոսքը գրողի և ժամանակի, գրողի և միջավայրի հարաբերակցության անհրաժեշտությամբ: Ծղմարիտ գրականությունը մաքառող շնչառություն ունի: Ա. Անդրեասյանի համար «իրապաշտությունը» գրական նախասիրած ուղղություն է, հատկապես վեպի ժանրի ընձեռած հնարավորություններում նա տեսնում է կյանքի գրեթե բոլոր շերտերը, այն ամենը, ինչ էական է, ինչից կա-

²⁰ Ա ն դ ր ա ն ի կ Ա ն դ ր Ե ա ս յ ա ն, Երկար գիշերին մեջեն, էջ 141:

րելի է կատարել գեղարվեստական ընտրություն: Եվ իսկապես, հասարակական զարգացման օրինաչափությունները հեղինակը կարող է պարզել միայն ռեալիզմի շնորհիվ, որն էլ, իհարկե, գրական ուղղության անվիճելի առավելությունն է մյուս «իզմերի» նկատմամբ: Ի միջի այլոց, սփյուռքի ամերիկահայ գրականությունը իր ձևավորման տարիներից անտարբեր չի եղել ռեալիզմի սկզբունքների հանդեպ, և դա ոչ մեկ անգամ կարելի է ընդգծել Հ. Կարապետյանի, Բ. Նուրիկյանի, Ա. Հայկազի, Հ. Ասատուրյանի և ուրիշների ստեղծագործություններում: Ա. Անդրեասյանը ռեալիստական ոգին արթուն է պահել ամերիկահայ գրականության մեջ, և դա է կարևորը:

Պրուքսր գրականության մեջ ճշմարտության մեկ ուրիշ արժանիքը տեսնում է կյանքի, մարդու վրա ներգործելու, ներազդելու մեջ: Բարեփոխել պայմանները, ազատել մարդուն կույր բնազդներից, ձգտել հասարակության մեջ մեծ իդեալներ հաստատման: Երբ արդեն սասանվել էր Պրուքսի անվտանգությունը, երբ օրեօր սպասում էին պայթույթի հանգուցալուծման, երբ նրա դասախոսությունները ստուգության էին ենթարկվում ԱՄՆ-ի սենատի ներկայացուցիչ Հաբեինգի կողմից, որը այդ ընթացքում իր համար պարզում է ողջ ճշմարտությունը և պաշտպան կանգնում նրա դատին, գլխավոր հերոսը համալսարանում իր սաներին մեկնաբանում էր ճշմարտության խաղացած դերը անհատի կյանքում. «Ճշմարտության լույսը ավելի փայլուն ու համառ կը շողա հոն, ուր խաբկանքին ու նենգության մութը կը տիրե: Ան կը նմանի ազատության, որ իբրև ձգտում և իտեալ, շատ ավելի անեղծ էություն մը տարերային թափով կը հայտնվի հոն, ուր որեւէ տեսակ բռնություն կը ժխտե կամ կը փորձե ոչնչացնել դայն»²¹: Թափանցիկ է Պրուքսի ակնարկը իր անվան շուրջ ստեղծված հալածական, դեռևս անորոշ կացության վերաբերյալ:

Պրուքսը շարադրում է իր գեղագիտական ընկալումները՝ մատնանշելով գեղարվեստական ստեղծագործության գնահատության ուրիշ կարևոր հատկանիշներ, ինչպես ասենք, կառուցվածքի, ձևի և բովանդակության համամասնությունները, կերպարների օգնությամբ հաղորդվող ազնվության և բարության ոգին: Նա ծանրանում է բարության տոլստոյական ուսմունքի գաղափարների վրա ոչ առանց Ա. Անդրեասյանի գոհունակ «օրհնության»: Տոլստոյականությունը սերում է, ըստ Պրուքսի քննական հայացքի, քրիստոնեական արմատից. «Զարին չարիքով չփոխադարձելու դավանանքը (Տոլստոյը—Ս. Դ.) վերացականն իշեցուց առօրյային, մանավանդ գործադրեց զայն»²²:

Անդրանիկ Անդրեասյանի դիտարկման ծայրահեղությունը միայն «թույլ», անպաշտպան բարության կույր պաշտպանության փորձը չէ, տր հերոսի շուրթերով փոխադրվում է նաև քաղաքական ոլորտ. որպես օրինակ բերվում է Մահաթմա Գանդիի որդեգրած ռոմանտիկական կառավարման ձևը, որը համարում է տոլստոյականության բուն մարմնավորում: Ամերիկահայ գրողը ավելի հեռուն է գնում. անասելով երկրում քաղաքական զարգացման վայրը՝ ընթաց գործոնները, դեմոկրատիայի ոտնահարման մակարտյան լկտի օրինակները, ռազմա-արդյունաբերական համալիրի շահերն արտահայտող «սառը պատերազմի» քաղաքականության փառաբանումը, նա, նկատի ունենալով Մարտին Լութեր Քինգի պայքարի մարդասիրական ոգին, արտառոց հայտարարություն է անում, թե «Թոլստոյի վեպերն հորդած այդ սիրո ոգին ու խաղաղ գործելակերպը... հիմա արդեն ներածված է մեր երկրին մեջ»²³: Առկա է մնում գլխավոր հարցը. ինչու՞ այդ արդեն «ներածված» փրկիսոփայությունը չի տիրապետում հասարակական բոլոր խավերը, չի ներազդում մարդկանց մտքի ու գործելակերպի վրա: Եվ վերջապես հարցը երևան է հանում Անդրանիկ Անդրեասյանի աշխարհայացքի թերին. նյութականացած ժամանակներում ուժի դիմաց բարությունը ի՞նչ ճանապարհով պիտի արտաքսի

²¹ Նույն տեղում, էջ 141:

²² Նույն տեղում, էջ 146:

²³ Նույն տեղում, էջ 147:

բռնություն, փողի իշխանությունը, որ այնպես ամուր դեռ նստած է մարդկանց մեջ: Տոլստոյական բարությունը, գուրջ առանձին անհատի, անհատականության խոր հոգեկան-դիտակցական շերտն է, և ուրիշ ոչինչ: Այն տակավին «նստվածքներ» չի տալիս պետական քաղաքականության մեջ, չի դառնում հասարակական կյանքում գերակշիռ և շահագործիչ հայացք:

Պատահական չէ կարիերայի սանդղակներով սուրացող փաստաբան, «արդարամիտ» Հերբլտի աստիճանական խորթացումը հորից: Նա հաշվենկատորեն իրեն հեռու է պահում Պրուքսի անվան շուրջ առաջացած փոթորկալի անցուդարձից՝ վախենալով, որ դա կարող է վնասել իր դիրքին, որ հանկարծ մեկընդմիջ կարող է ղրկվել կապիտալի հղորների հովանավորությունից: Հերբլտի կուռքը ֆինանսական բոսն է, մասնավորապես, պատրոն Պրաունը, որի բարեհաճությանը հասնելու անգամ ուղին խոր հիասթափություն է առաջացնում. հարուստ ժառանգորդուհու հետ ամուսնաճալու հեռանկարը խոստանում է «առաջադիմող» երիտասարդին ապագա աներոջ հետ առևտրական շահավետ բաժնետիրություն: Մտապահենք հերոսի վաթսգածի միտումը. Պրուքսի որդու իդեալը ո՛չ Տոլստոյն է, ո՛չ Դանիկին, ո՛չ Քինգը, ո՛չ էլ ինքը՝ հայրը:

Ահա այստեղ է ուսանողներին մարդասիրական գաղափարներով զինող Պրուքսի պարտությունը, որը թույլ է որդու դիմաց: Վերջինս հեռանալով հայրական տնից, ըստ էության հեռանում է ազնվության ավազանից: Լքում է հորը, երբ կողքին պիտի լինեն, սատար կանգնեն իրավագիտական իրիմացությունից, ծնողի և ճշմարտության հանդեպ բարոյական պարտքի ըմբռնումով: Վերջում կարելի է ևս մեկ անգամ ուշադրությունը սեռել վերնագրին, որի ընտրությունը դիպուկ է, նպատակամետ, շարունակում է ամերիկյան գրականության մեջ մակարտիզմի քննադատական այն ոգին, որի առաջապահ մարտնչողներից մեկն է ինքը:

Ա. Անդրեասյանը գրական շրջանակներին հայտնի է նաև իր հրապարակախոսական-գրականագիտական հայացքներով: 70-ական թվականների կեսից Լոս Անջելեսում սկսեցին լույս տեսնել «Դրական, ազգային և հասարակական խոհերի» ծանրակշիռ հատորները, որոնց մեջ ամփոփվեցին գրողի ավելի քան կեսդարյա ազգային-գրական, քաղաքական բազմապիսի մտորումները: Կրթություն, մարտնչող, հետաքրքրություն ունի նա ազգային-մշակութային ամենատարբեր, բազմաբնույթ խնդիրների շուրջ: «Պատմե՛ք Վրա» նրա պաշտպանած սկզբունքները այսօր էլ գրավում են հիմնականում առողջ, կուռ տրամաբանությամբ, ժամանակի մտայնություններին և գրական խառնակ բարքերին դիմագրավելու ներուժով: Դա մասնավորապես վերաբերում է Հովհ. Ավագյանի, Շ. Շահնուրի, Կ. Զարյանի, Ա. Հայկազի գրական-գեղարվեստական ժառանգության հարցերին: Օրինակ, Կ. Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի երևանյան հրատարակության առթած գրական աղմուկը. գրողի վերանայած վիպական դրվագները Ա. Անդրեասյանը քննում է որոշ ծայրահեղ տեսակետներին հակադրվելու ջանքով: «Կոստան Զարյանի քննադատները» հոգվածում հեղինակը զարգացնում է այն միտքը, թե՛ «Նավը...» երկրորդ տպագրությունը գեղարվեստական արժեքով շահեր է՝ քաղաքական կարգ մը վեճերու և վարկածներու բեռներեն թեթևալով»²⁴:

Դրական մեծ ճանապարհ է անցել Անդրանիկ Անդրեասյանը: Իմ այսօր վաստակած արձակագիրը շարունակում է ապրել ստեղծագործական. ինչպես նաև ազգային-հասարակական անհանգիստ գործունեությամբ:

²⁴ Անդրանիկ Անդրեասյան, Խոհեր գրական, ազգային և հասարակական, հ. Բ, Լոս Անջելես, 1976, էջ 100:

АНДРАНИК АНДРЕАСЯН И НОВЫЙ ПОДЪЕМ
КРИТИЧЕСКОГО РЕАЛИЗМА

С. Д. ДАНИЕЛЯН

Резюме

В своем творчестве крупный армянский зарубежный писатель Андраник Андреасян затрагивает тему исторических судеб армян начала XX в. и их новой жизни на чужбине—в США. Об этом повествуют сборники рассказов «Белая справедливость», «Последнее пристанище», «Чаша горечи», а также еще не завершенная трилогия «Коллизия и возрождение».

Роман «Сквозь долгую ночь» посвящен жизни американской интеллигенции 50-х годов. Автор, десятилетиями живя в американской среде, отлично знает духовную и политическую атмосферу, быт и чаяния американского народа. Подвергаясь провокациям и гонениям со стороны лидеров маккартизма, герой романа Джеймс Брукс отстаивает принципы порядочности, чистоту совести, ратует за мир и дружбу между США и СССР в период недоверия, холодной войны.

Политический роман А. Андреасяна написан на армянском языке, правдиво изображает борьбу различных партий и общественных тенденций.

ANDRANIK ANDRIASIAN AND THE NEW RISE OF CRITICAL
REALISM

DANIELIAN S. I.

Summary

In his creativeness, Andranik Andriasian, a great Diaspora Armenian writer, touches on the subject of historic human fates of the beginning of the 20th century and their new lives in foreign countries, particularly in the United States of America. That is what the collections of his stories "White Justice", "The Last Station", "The Cup of Bitterness" as well as the unfinished novel "Devastation and Rebirth" bear evidence to.

The novel "Through a Long Night" is devoted to the life of the American intelligentsia of the 50's. The author, for decades on end in the American environment, wonderfully knows the political and spiritual atmosphere, the life and hopes of the people. James Brooks, the hero of the novel, being subjected to persecutions by McCarthyism, upholds the legacies of good breeding, conscience and purity; he stands for peace and real friendship between the peoples of the USSR and USA during the period of cold war and distrust. A. Andriasian's political novel is written in Armenian, it truthfully illustrates the social tendencies and the struggle of different political parties.